

Թիւ 26086
Նոյեմբեր 15, 1978

Յարգելի
Տիար Աւօ Վարդանեան
Հոլանտա.

Սիրելի Տիար Վարդանեան,

Մեզի համար հաճելի անակնկալ մը եղաւ Բա.Էլ.Էմ. ընկերութեան օդա-
նաւով Հոլանտայէն դէպի Նիւ Եորք թռիչքի ընթացքին ստանալ ձեր եւ
Ձարլի ծոգէֆի կողմէ դրկուած նուէրը եւ բարտը:

Տոյս ունինք որ Ալմէլօ մեր այցելութիւնը եւ կատարած դիմումները
իրենց ջարերար ազդեցութիւնը կ'ունենան այնտեղ հաւաքուած մեր հայ-
րենակիցներու կեցութեան եւ աշխատանքի իրաւունք ստանալու կապակցու-
թեամբ: Այստեղէն պիտի շարունակենք հետապնդել այդ հարցը, եւ մեր
կարելի միջոցները ի գործ պիտի դնենք անոր յաջողութեան համար:

Ձեզի եւ ձեր ընտանիքի անդամներուն կը մաղթենք առաւել առողջու-
թիւն եւ ձեր գործերուն յաջողութիւն:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ